ՏԵՂԵԿԱՆՔ

Հոդված 324. Հարկ վճարողի սնանկությունը

1. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ~~սնանկության գործի~~ սնանկության վարույթի ավարտն ընկած ժամանակահատվածում գործում է մորատորիում (պարտատերերի պահանջների բավարարման սառեցում), որի դեպքում պահանջները բավարարվում են ըստ օրենքով սահմանված հերթականության, իսկ ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումից հետո պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունների կատարումն իրականացվում է այդ ծրագրով սահմանված կարգով:

~~2. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև սնանկության գործի ավարտն ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց մինչև ծրագրի ավարտի օրը ընկած ժամանակահատվածներում կանխավճարներ, տույժեր և տուգանքներ չեն հաշվարկվում (այդ թվում՝ օրենքով սահմանված հերթականությամբ ժամկետները խախտելու դեպքում): Ընդ որում, պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև սնանկության գործի ավարտն ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց մինչև ծրագրի ավարտի օրը ընկած ժամանակահատվածներում մինչև վճռի ուժի մեջ մտնելը հաշվետու ժամանակաշրջաններին (ժամանակահատվածներին) վերաբերող ստուգումներով (կամ վերստուգումներով) այդ ժամանակաշրջանների (ժամանակահատվածների) համար լրացուցիչ հայտնաբերված գումարների նկատմամբ տույժեր և տուգանքներ չեն հաշվարկվում, իսկ սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո հաշվետու ժամանակաշրջաններին (ժամանակահատվածներին) վերաբերող ստուգումներով (կամ վերստուգումներով) տույժերը և տուգանքները հաշվարկվում են Օրենսգրքով սահմանված կարգով:~~

2. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև սնանկության վարույթի ավարտն ընկած ժամանակահատվածում, կանխավճարներ չեն հաշվարկվում, դադարում է պարտապանի՝ հարկերի, տուրքերի այլ վճարների գծով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար տույժերի և տուգանքների հաշվեգրումը: Ընդ որում, պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև սնանկության վարույթի ավարտն ընկած ժամանակահատվածում, մինչև վճռի ուժի մեջ մտնելը հաշվետու ժամանակաշրջաններին (ժամանակահատվածներին) վերաբերող ստուգումներով (կամ վերստուգումներով) կամ այլ եղանակով (այդ թվում՝ ճշտված հաշվարկներով) այդ ժամանակաշրջանների (ժամանակահատվածների) համար լրացուցիչ առաջացած հարկերի, տուրքերի այլ վճարների գծով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար տույժեր և տուգանքներ հաշվարկվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելու օրը:

2.1. Սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև սնանկության վարույթի ավարտն ընկած ժամանակահատվածում կասեցվում է պարտապանի՝ մինչև վճռի կայացման օրվա դրությամբ առկա հարկերի, տուրքերի այլ վճարների գծով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար տույժերի և տուգանքների հաշվեգրումը:

2.2 Սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռը կայացնելուց հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար տույժեր և տուգանքներ հաշվարկվում են Օրենսգրքով սահմանված կարգով: Ընդ որում, սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև սնանկության վարույթի ավարտն ընկած ժամանակահատվածում, մինչև վճռի ուժի մեջ մտնելը հաշվետու ժամանակաշրջաններին (ժամանակահատվածներին) վերաբերող ստուգումներով (կամ վերստուգումներով) կամ այլ եղանակով այդ ժամանակաշրջանների (ժամանակահատվածների) համար լրացուցիչ հայտնաբերված հարկերի, տուրքերի այլ վճարների գծով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար տույժեր և տուգանքներ հաշվարկվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելու օրը, իսկ վճռի ուժի մեջ մտնելու օրվանից հետո հաշվարկման ենթակա տույժերի և տուգանքների հաշվեգրումը կասեցվում է:

2.3 Սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո հաշվետու ժամանակաշրջաններին (ժամանակահատվածներին) վերաբերող ստուգումներով (կամ վերստուգումներով) տույժերը և տուգանքները հաշվարկվում են Օրենսգրքով սահմանված կարգով: Ընդ որում, եթե սնանկության վարույթն ավարտվում է պարտապանի առողջացմամբ, ապա սույն կետով սահմանված կարգով կասեցված տույժերը, տուգանքները համարվում են դադարած, իսկ եթե սնանկության վարույթն ավարտվում է առողջացման ծրագրի չկատարման հետևանքով, ապա կասեցված տույժերը հաշվեգրվում են պարտապանի անձնական հաշվի քարտում:

3. Պարտապանի գործունեության կասեցման ժամանակահատվածները ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար հարկ վճարողի անունից կառավարչի կողմից ներկայացված՝ սնանկության վարույթի ընթացքում լրացուցիչ առաջացած հարկային պարտավորությունները գրանցվում են այդ տեղեկատվության ընդունման ամսաթվով (որպես ապառք, որի նկատմամբ տույժեր չեն հաշվարկվում):